

676.2  
P-87

11319

# ԹՈՒԳՈՐ

Եթ

Հ Տ Ն Գ Ր Ք Ե Ր

---

Թարգմանեց

Ցիրուհի Կոստանեանց

---

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ա. Շարամբէ, Նիկ փ. առ. 21

1894

676.8+003

P-87

up

# ԲՈՒՂՋԹ

69

Հ Տ Ն Գ Ր Ք Ե Ր

p. 16

Թարգմանեց

## Տիրուհի Կոստանեանց

12002

Digitized by srujanika@gmail.com

Տպ. Մ. Շարամի. || Տիպ. Մ. Շարամի.

1894

7/11-192

17487

ԹԱԿԹ

ԵՒ

ՃՐԱ ՊՐՖԼՔ

ԹԱԿԹ

Дозв. цензур., Тифлисъ, 10 Марта 1894 г.



նում, որի ծալըին մի մեխ է ցցուած լինում, գորանով նոքա աղբը փորփռում և պարկի մէջ գցում են ախ, ինչ որ նոցա հարկաւոր է: Հին շորի կտորտանքները հաւաքելով, նոցանից ամեն մէկը վերադառնում է գործարան և տալիս է իւր բոլոր հաւաքածը: Մէկ օրուայ մէջ ինչ տեսակ ջնջոց ասես որ չեն ժողովում նոքա. Հին շոր, ամեն տեսակ անպէտք կտոր, որ դուք պատուհանից գուրս էք գցել, բոլորը տանում են գործարան: Մի քանի բանուորներ նստում են ջոկ-ջկելու ալդ բերած կտորտանքները: Հաստ ու կոշտ տեսակներն առանձին են գընում բարակ և փափուկ կտորներից, բըրեղէնը քաթանից և ալլն: Բոլորովին միատեսակները մէկ կապոց են անում և աշխատանքի վերջն ալդ տեսակ կապոցներ երեմն 30 և էլ աւելի են լինում: Ամեն մէկ կապոցից, երբ շատ հին շոր է հաւաքվում, շինում են առանձին տեսակ թուղթ:

Թուղթ պատրաստելու համար ամենից առաջ ջնջոյը մաս մաս են անում և գէն են գցում կարուած տեղերն, օղակները, կոճակները և ալլն: Որովհետեւ հին շորի կտորտանքները աղբի ու ցեխի մէջ են լինում, այդ պատճառով բոլորովին պէտք է մաքրել: Մաքրելու համար նոցա գնում են մի մեծ արկղի մէջ, որի ներսը պտտում է մէկ անիւ առանց օղակի, հաստ ճաղերով: Երբ անիւը սկսում են պտտացնել, նորա ճաղերը խփում և տրորում են շորի կտորտանքները և ալդպիսով ոչնչացնում են չոր ցեխը: Այդ գործի ժամանակ այնպիսի փոշի է բարձրանում գործարանում, որ էլ շունչ առնել կարելի չէ: Որպէս զի փոշին օդի մէջ ցըուի, արկղի տակից շինում են ծածկոց ծխնելոյզով, ինչպէս որ ալդ լինում է խոհանոցի օջախների վերալ: Մաքրելով հին շորերն, ապա լուանում են մեծ կաթսաների մէջ: Նոցա շատ լաւ լուանալու համար ջրի մէջ լցնում

Են սոդա, կիր, կամ մոխիր: (Լուացարաբներն էլ մոխիր են գցում փռքըիկ տոպրակով ջրի մէջ, որ լուացքն աւելի մաքուր և սպիտակ լինի:) Կտորտանքներն եփուելուց յետոյ, բծեր էլ չեն մնում և բոլորովին սպիտակում են: Բայց բանն այդ է, որ նոքա եփում, քրքրվում և կիսահեղուկ բան են դառնում: Եփուելիս նոցա շատ անգամ խառնում են, որ այդ խաշիլն աւելի հաւասար դուրս գալ:

Այդ պատրաստի խառնուրդը լցնում են մէկ մեծ ամանի մէջ, աւելացնում են ջրալի սոսինձ, որովհետև առանց դորան թուղթը կըծորէ: Երբ սոսինձը խառնվում է խառնուրդի հետ, այն ժամանակ պէտք է թերթեր պատրաստել այս կերպ. մէկ բանուոր խառնուրդը լցնում է մի առանձին տեսակ քառանկիւնի թաւի մէջ. այդ թաւի յատակը մաղի թելերից է շինած, որ խառնուրդի շուրը վար վազէ. իսկ թաւի կողքերը

կարելի է հանել և էլի դնել Բանուրդը խառնուրդը խառնելով և թաւէն թափ տալով, հանում է թաւի կողքերն ու տալիս է ուրիշ բանուրդի, որն իսկոյն խառնուրդի վերայ թաղիք է դնում և թաւէն շուռ է տալիս. խառնուրդի շերտը մնում է թաղիքի վերայ: Երբ այդ կերպ շատ կտորներ են պատրաստվում, իրար վերայ են դնում և սեղմում են, որից յետոյ այդ խառնուրդը դառնում է թղթի հաստ թերթ: Թուղթն աւելի հաստ լինելու համար թաղիքի տեղ կարտոն են դնում և էլի մէկ անգամ սեղմում են. այն ժամանակ թերթերը պատրաստ են, միայն նոցա պէտք է չորացնել. այդ արդէն ձմեռն են անում, որովհետև ինչպէս նկատուած է, ցըտից թուղթն աւելի սպիտակ է դուրս գալիս և աւելի լաւ է լինում:

Նաև գործարաններում մեքենաներ կան շինուած: Երբ խառնուրդը պատրաստ է լինում, իսկոյն լցնում են մե-

քենալի վերայ և երկու ըռպէից լետոյ  
թուղթը պատրաստ է լինում։ Մեքե-  
նալի տակից թուղթը դուրս է գալիս ոչ  
թէ թերթերով, այլ շերտով։ բայց մե-  
քենան ինքն է կտրատում և թերթեր  
շինում։

## ՀԻՆ ԳՐԱՔԵՐԻ



Երկայ ժամանակս ու-  
սում առած մար-  
դուն բոլորովին  
դժուար չէ նա-  
մակ գրել, գիր-  
քը կամ ուրեշի  
գրածը կարդալ.  
Մեզ փոքր հա-

սակից սովորեցնում են գրել և կարդալ.  
բայց շատ քիչ է պատահում, որ մեղա-  
նից մեկը հարցնէ, թէ արդեօք մարդիկ  
ինչպէս են հնարել այդպիսի լաւ բան,  
ինչպիսին որ է գրելն ու կարդալը։

Սկզբում մեզանից շատերն են  
դժուարութեամբ սովորում, բայց այն-

քան էլ շատ գժուար չէ, որ կարելի լինի տսել թէ հարկաւոր են ուրիշ միջոցներ, որ մարդ կարողանայ տառերը ջոկել: Բայց գլխաւորն այն է՝ մենք այնպէս գրել ենք սովորում, որ կարող են հասկանալ բոլոր հայերը. Եթէ մենք մի գրած թերթ կամ մի որ և է տպած գիրք ձեռքերս առնենք, առանց գժուարութեան կը կարդանք, ինչ որ այնտեղ գրուած է: Թէ և 'ի հարկէ լինում են այնպիսի վատ գրած ու խազմզած նամակներ, որոնց կարգալը գժուար է. բայց դորա մեղքը գրողինն է. ինչու նա լաւ գրել չէ սովորել, որ կարելի լինի նորանամակը կարգալ հեշտութեամբ:

Արդեօք ո՞վ հնարեց տառերը խօսքեր գրելու համար: Այդ հարցին պատասխանելն անհնարին է: Մարդիկ շատ վաղուց է որ գրում են, այնպէս որ հիմայ անկարելի է ասել, թէ ով առաջինը հնարեց գրել և սովորեցրեց ուրիշներին էլ:

Երբ դուք լսում էք զանազան պատմութիւններ հնդկների, եգիպտացիների և շատ առաջ ապրող լոյների մասին, դուք սկսում էք մտածել շատ անցած, գնացած ժամանակների մասին. Հայնպէս չէ: Բայց դեռ այն ժամանակն էլ մարդիկ կարող էին գրել. հիմայ 'ի հարկ է ուսում առած մարդիկ աւելի շատ կան քան թէ առաջ:

Այն ժամանակուայ հին գրքերում ասուած է, որ մարդիկ գրել սովորել են աստուածներից, մարգարեներից և ալլա տեսակ մարդկանցից. բայց դորանով էլ չի կարելի հաստատն իմանալ: Այն ժամանակուայ մարդիկ շատ բան չէին հասկանում, ինչ որ հիմայ ամեն մէկին յայտնի է. և մի և նոյն ժամանակ ուզում էին բացատրել, թէ այս կամ այն բանն ինչիցն է առաջ եկել. որտեղից է առնուել: Մի քիչ որ գործն աւելի ծանր էր երեսում, նոքա վճռում էին ալսպէս թէ մարդուն խելքը չի կտրի այդ գժուար

խնդիրը լուծելու» և ասում էին՝ Բնչ-  
պէս նա կարող է. դորա համար պէտք  
է մարդուց աւելի լաւ, աւելի խելօք և  
աւելի ընդունակ լինել:

Երկնքում ամպը գոռում է, ասում  
էին՝ այդ աստուած է, որ իրան ոսկի  
կառքի մէջ նստած գնում է և դորանից  
այդպիսի գոռգոռոց է լսվում. Քամին  
փշում է, դարձեալ աստուած է, բայց  
դա արդէն առաջուանը չէ, որ գոռգո-  
ռայնում էր ամպերն, այլ ուրիշ է։ Եւ  
այդպէս, այն ժամանակ մարդիկ աս-  
տուածներ շատ ունէին. նոցա ասելով  
ամեն աստուած իրան գործն ու իրան  
համար առանձին տեղ ունէր ապրելու։  
Դրել կարդալն էլ իմաստուն դործ է, ու-  
րեմն այդ էլ աստուածներն են հարել,  
ասում էին նոքա։

Ուրեմն հարկաւոր չէ փնտուել, թէ  
ով է գիրն այնպէս կազմել, որ ամենքն  
էլ հասկանան։ Բայց կար ժամանակ, որ  
մարդիկ հիմիկուայ պէս չէին կարող գրել։

Գուցէ կար մինչև անգամ այնպիսի ժա-  
մանակ, որ մարդիկ հարկաւորութիւն  
չունէին գրելու։ Այն ժամանակները մար-  
դիկ ապրում էին փոքրիկ խմբերով, պա-  
րապում էին իրանց գործով և չեին ճա-  
նաչում ու տեսնում ուրիշ մարդկանց,  
որոնք իրանցից շատ հեռու տեղերումն  
էին ապրում։ Դրելու պէտք չկար. ոչ  
ոքի նամակ չեին գրում. թէ որ մէկ բան  
հարկաւոր լինէր վճռել, նոքա հաւաք-  
վում էին միասին, խօսում, դատում էին  
և ամեն մէկը լաւ գիտէր, թէ ինչ պէտք  
էր անել և ինչպէս վարուել։ Բայց այդ-  
պէս երկար տևել չէր կարող։ Մարդիկ  
ուզեցան գրել, որ լիշեն, թէ երբ ինչ  
պատահեց, ով ծնաւ, ով մեռաւ. կամ  
նշանակեն մի լայտնի գէպք, որ իրանց  
երեխաներն ու ժոռները լիշեն ալդ ան-  
ցած օրերը։ Մարդուս լիշողութիւնը միշտ  
տեղը չի մնար, իսկ գիրը կը մնայ. և  
ահա մարդիկ սկսեցին նկարել այն, ինչ  
որ պէտք էր գրել։ Ասենք թէ մի մարդ

ուղենար գրել, որ ձիով անցնելիս հանգիպեց մի օձի. նա նկարում էր մի ձիաւորի, իսկ նորա կողքին օձ՝ ՚ի հարկ է, ամեն բան չէր կարելի այդ կերպ յալտել: Զորօրինակ դուք թնչպէս կընկարէք, թէ ձեր պապն ազնիւ ու բարի էր և կամ ձեր ընտանիքն Աստուած գիտէ թէ որ ժամանակուանից ապրում է այս կամ այն տեղում: Բայց այդ տեսակ մտքերի համար էլ մարդիկ գտան հնար: Դիցուք պէտք է ասէին թէ գործին վերջ չկար: Նոքա նկարում էին մէկ կլօր շրջանակ. և ուղիղ որ կլօր շրջանակը ոչ սկիզբ և ոչ էլ վերջ ունի: Ասենք թէ ուզում էին իմաստուն մարդ գրել. նկարում էին օձ, որովհետև օձը համարվում էր իմաստուն կենդանի: ՚ի հարկ է, ամեն մէկ խօսքի համար չէր կարելի գտնել այնպիսի առարկալ, որը յիշեցնէր այդ խօսքը և եթէ գտնուէր էլ ամեն մարդ չէր կարող հասկանալ: Տգէտ մարդն այդ գիտութիւնից գուրկ էր. նա չէր կարող ջոկել, թէ ինչ

է գրուած այս կամ այն տապանաքարի, կամ արձանի վերայ և նա ստիպուած հարցնում էր սւսում առած մարդուն, որ նա իրան բացատրէ:

Հիմա շատ հեշտ է գրածը ջոկել ձեռնից ամէն մէկը գիտէ, որ այս ինչ տառն այսպէս պէտք է արտասանել, միւս տառն ուրիշ տեսակ գուք գիտէք թէ երկու տառ ի միասին ինչ կլինի և հասկանում էք նոյնպէս, որ տառերն իրար մօտ գրելով, կըկազմուի բառ և ապա խօսք. եթէ ուշադրութեամբ կարդաք, չէք սխալուի: Ձեզ հարկաւոր չէ գլուխ ջարդել, որ հասկանաք, թէ ինչ է նշանակում այս «Օ». դուք չէք հարցնի՝ արդեօք՝ սա հասարակ շրջանակ է թէ նշանակում է մի բան, որը վերջ չունի. կամ չէք ասի, թէ սորան նկատելով մարդն ուզեցել է հասկացնել՝ որ մի բան գլորվում է և այլն. մէկ խօսքով, առանց երկար մտածելու և չարչարուելու, գուք ասում էք՝ սա «Օ» տառն է: Նոյնը կ'ասէ և միւսն, երկ-

բորդն, երրորդը և ամէն մէկն, ով որ  
դըել կարդալ է սովորում:

Բայց քանի որ բոլոր ազգերը գեռ  
չգիտէին տառերով գրել, նոքա մտածում  
էին զանազան միջոցներով յալտնել իրանց  
տեսածը, լսածն ու փորձածը. նոքա նկա-  
րում էին այն առարկաները, որոնց մասին  
որ խօսվում էր: Ուր որ գնան ճանապար-  
հորդներն, ամէն տեղ գտնում են զա-  
նազան առարկաներ հին արձանագրու-  
թիւններով: Երբեմն հնագէտները հողը  
փորում և գտնում են այնպիսի բաներ,  
որոնք շատ վաղուցուանից պահուած են  
եղել գետնի տակ: Այդ տեսակ հնութիւն-  
ների մեծ մասը հաւաքում և պահպա-  
նում են թանգարաններում:

Առաջուալ մարդիկ գրում էին ամէն  
բան, ինչ որ տարօրինակ էր. հին թա-  
գաւորների տապանագարերի վերայ գրը-  
ուած կան նոցա գործերն ու կեանքը:  
Բացի գորանից գտնուել են այնպիսի փայ-  
տէ և մետաղէ տախտակներ, որոնց վե-

րայ գրուած են մէկ որ և է թագաւորի  
կամ իշխանի հիմնած օրէնքները և պա-  
տահում են ուրիշ էլ աւելի նշանաւոր  
բաններ: Այդ արձանագրութիւններով լի  
տախտակները համարեա բոլորովին չեն  
փչացել, չնայելով որ Աստուած գիտէ,  
թէ որչափ հին ժամանակներից են մնա-  
ցած: Գտնուել են կոտրտուած ամաննե-  
րի կտորտանքներ, որոնց վերալ գրուած  
են եղել խոհարարի հաշիւնները, ծախած  
առարկանների ցուցակը և ալլն: Արդէն  
շատ ուշ, երբ տառեր գտնուեցին, սկսե-  
ցին գրել ծառի մեծ ու լայն տերեւնների  
վերալ և էլի կեղեւի քաթանի և ամէն  
բանի վերայ ինչ որ պէտք էր գալիս այդ  
նպատակի համար:

Այդ միջոցում դուրս եկան փղոսկրէ  
թերթեր. նոցա վերայ գրում էին սե-  
թանագով, կամ թէ նոցա երեսին մեղ-  
րամոմ քսելով, տառերը փորում էին մեղ-  
րամոմի վերայ: Այդ տեսակ թերթերի վե-  
րայ այնպիսի բաներ չէին գրում, որոնք



Երկար պէտք է պահուէին. այլ ձեռաց լիշելու խօսքեր էին նշանակում և մի քանի ժամանակից լետոյ մեղրամոմբ հալեցնելով, ջնջում էին գրածն ու նորից տառեր էին խազմզում նորա հարթերեսի վերալ:

Ի հարկ է, քարերը, մետաղէ թերթերն ու այդ տեսակ առարկաները միշտ այնքան էլ յարմար չէին գրելու համար: Բայց քարերը շատ պէտք էին գալիս արձաններ շինելու համար. իսկ մետաղէ թերթերի վերալ օրենքներ էին գրում և դնում էին մի որ և է հրապարակի վերալ, որ ամենքն էլ կարդան ու իմանան: Բայց շատ անլարմար էր, որ դոցա վերալ գրուածները չէր կարելի նամակի նման ուղարկել ուրիշ տեղեր կամ հետք ման ածել ամեն տեղ: Ուրեմն պէտք էր այնպիսի մի բան գտնել, որն աւելի թեթև և փափուկ լինէր, որ կարելի լինէր ծալել և հարկաւոր եղած ժամանակ գըրպանում դնել:

Եղիպատոսում արեւի խիստ տաք ճառագալթների տակ ոչ շատ խորը և համարեա թէ կանգնած ջրերի մէջ բուսնում էին պապիրուսի ամբողջ անտառներ: Դա եղեգնի նման մի բոյս էր, որ ունէր մէկ ու կէս սաժէն բարձրութիւն, երկար, ուղիղ ճիւղեր և ծուռն արմատ: Նորա կատարին բուսնում էր լայն ու թիակի նման տերեւ և նորա արմատից քիչ բարձր ամեն կողմ տարածվում էին բարակ արմատներ: Հին ժամանակ եղիպատցիք պապիրուսից շատ օգուտ էին ստանում. նորա ճիւղերից պարաններ էին հիւսում, կտոր էին գործում հագուստի ու առագաստների համար, զամբիւղներ էին շինում. իսկ նորա արմատից զանագանակերպ խորոված ու տապակած կերակուրներ էին պատրաստում: Այդ բոյսի ճիւղերի կեղեւի տակ մի քանի կարգ բարակ ու քնքուշ կաշի կար և ահա այդ կաշուից մտածեցին թղթի թերթեր շինել:

Թուղթ պատրաստելու համար գործ էին դնում ճիւղերի այն մասը, որ բուսնում էր ջրի մէջ, որովհետև դա տւելի սպիտակ էր լինում: Այդ տեսակ ճիւղերից կեղեք հանում էին, իսկ լետոյ մէկը ճիւսի ետևից պոկում էին բարակ շերտերը: Բոլոն այդ շերտերից ունենում էր 10—12 կարգ և մէջ տեղի շերտերն առելի քնքոյշ ու սպիտակ էին լինում: Եւ քանի որ գոքա թարմ ու խոնաւ էին, ձրգձրգում, դնում էին կաղպարի տակ: Իսկ լետոյ ալդ շերտերից մի քանիսը կըպցնում էին կողք կողքի և ստանում էին թերթ, իսկ միւսներն էլ կպցնում էին ծալը ծալը, որ ժապաւէնի նման երկար թերթեր էին դուրս գալիս: Բայց որովհետև ծառից ստացուած այդ տեսակ թուղթը կարող էր չօրանալ, ուրեմն պէտք էր այդ թղթին դիմացկուն դարձնել և ահա հնարը դտան: Ակսեցին շերտերն իրար կպցնել, հիւսել խաչաձև, հարթեցնել զղոսկը կամ իւղով, որ թերթը

չփշանալ խոնաւութիւնից ու չորանայ և այդ կերպ կարողանում էին պահպանել այն միջատներից, որոնք սիրում էին այդ շերտերն ստել, ոչնչացնել:

Պապիրուսից ստացուած ալդ թուղթը զուր չէր կորչում: Անպէտք, զըուած թերթերից կօշիկներ էին կարում, իսկ իրար կպցրած մի քանի թերթերից կարտոնի տեսակ մի քան էին շինում և գործ էին դնում կօշիկի տակի հաստ կաշու տեղ:

Դատ տեղերում պապիրուսից թուղթ էին շինում, բայց միշտ միատեսակ ու լաւ չէր դուրս գալիս: Ամենալաւ թուղթը գործ էին դնում թափաւորների և սուրբ գրքերի համար, իսկ հասարակն ուրիշ գործերի համար: Նինում էին և այնպիսի վատ թուղթ, որի վերայ ոչինչ չէր կարելի գըել: այդ տեսակը գործ էին դնում խանութներում ապրանք փաթաթելու համար:

Դեռ Մովսէս մարգարէի ժամանա-

կից պապիրուսի վերալ գրուած ձեռագրեր են մնացել, որոնք համարեա թէ չեն փչացել մինչեւ հիմալ:

Եգիպտոսում թանգ գնով առնում էին պապիրուսի արմատը և տանում էին զանագան երկրներում տնկում էին, բայց նա լաւ ու բարձր չէր բուսնում: Ստիպուած, պատրաստի թուղթը գնում էին եգիպտացիներից: Պատահում էր, որ Եգիպտոսից եկած նաւելրը թղթի բեռներով կործանվում էին փոթորկից: պատահում էր նոյնպէս, որ պապիրուսի անպտղութիւն էր լինում. այն ժամանակ ոչ մի տեղից թուղթ գտնել չէր կարելի և շատ էլ թանգանում էր: Մէկ անգամ այն աստիճանի հասաւ, որ Հռոմում թուղթ չլինելու պատճառով սաստիկ գրժուարութիւններ էին քաշում. Հազարաւոր ժողովուրդ թղթավաճառների խանութները շրջապատում էին և ամեն մէկն ուզում էր թղթի պաշար ունենալ, քանի որ գեռ ծախվում էր: Ստիպուած

եղան առանձին միջնորդներ նշանակել, որ նոքա քաղաքում գտնուած բոլոր թուղթը հաւասար բաժանեն ամենքին:

Քանի որ պապիրուսի թուղթը շատ քիչ էր, սկսեցին նորից առաջուալ պէս գրել փայտէ տախտակների, փղոսկրի և կաշու վերաբ Երբ գրել գիտցողները շատացան և թուղթը բաւական չէր անում, շատերը սկսեցին մտածել, թէ արդեօք ուրիշ մի այնպիսի առարկայ չէ կարելի ճարել, որը պէտք գալ գրելու համար: Եւ այդ ժամանակից աշխատեցին լաւ կաշի պատրաստել, գորա մասին շատ հոգս էր տանում մէկ պերգամեցի թագաւոր: այդ պատճառով էլ գրելու համար պատրաստուած կաշին կոչուեց պերգամենտ (մագաղաթ):

Մագաղաթի համար գործ էին գնում հորթի, ոչխարի և ուրիշ կենդանիների կաշի, որը բոլորովին խտակում էին ըըրդից, մսից և ճարպից: լետոյ թրջում էին նորան աղաջրի ու թթուաջրի մէջ, չո-

ըացնում էին ձգձգելով շրջանակի վերալ. հարթեցնում և հաւասարեցնում էին, որ կնճիռներ չմնան: Եւ այդ կերպ մի երկու անգամ անելուց լետով կաշին կտըրտում, դնում էին ծանր բանի տակ և այդպէս ծախում էին: Մագաղաթն տւելի լաւ լինելու համար, երբեմն սպիտակացնում էին: Մագաղաթը պապիրուսից շատ աւելի սիրուն և դիմացկուն է: Նուտով մագաղաթը վեր դասեցին պապիրուսից. պապիրուսն արդէն շատ վաղուց է որ էլ գործ չեն դնում, իսկ մագաղաթի վերալ մինչեւ օրս էլ գրում են նշանաւոր գրութիւններ:

Հիմայ երբ մէկ մարդ ծախում է իւր տունը, գետինը, կամ մի ուրիշ բան, գրում է առանձին թղթի վերալ և խընդրում է մէկին վկայ լինել և վկան էլ ստորագրում է այդ թղթի տակ: Իսկ առաջ այդ տեսակ գործերը գրում էին կեղեկ վերալ: Կեղեկի թերթերից ամբողջ գրքեր էին կազմում. իսկ մագաղաթն,

ինչպէս դուք իմացաք հազուաղիւտ էր: Ուրեմն հին ժամանակ այդ տեսակ նիւթերի վերալ էին գրում:

Ս.աջ շատ քիչ մարդ գիտէր կարդալ և գրել: Յալտնի մարդիկ մինչեւ անգամ շատ թագաւորներ բոլորովին անգրագէտ էին: Գրագիրներ, մանաւանդլաւերը, շատ քիչ կային: Այն հարուստները, որոնք շատ էին սիրում գրքեր ունենալ, գրել էին սովորեցնում իրանց գերիներին և առանձին վերակացուներ էին նշանակում, որոնց մօտ այդ գերիները պէտք է արտագրէին զանազան գրքեր: Ժամանակին շատ ու շատ աւելացան գըրքեր ցանկացող մարդիկ, բայց գրագիրներ շատ գժուար էր գտնել: Այդ պատճառով մի քանիսն ուզեցին գորանից օգուտ քաղել. և գրել սովորեցնելով իրանց գերիների երեխաներին, ծախում էին նոցա շատ թանգ գնով, թէև առաջ էլ լաւ մարդիկ կային, որոնք լարգում էին լաւ գրել գիտցող գերիներին և նոցա ազտա

էին թողնում ու դառնում էին նոցա լաւ  
բարեկամ ու ընկեր:

Գրագիրն երբ պատրաստվում էր գրե-  
լու, թերթի կողքերը բաց էր թողնում  
և մնացածը տողում էր. գորա համար  
նա քանոն ունէր և մէկ սրածալր փայ-  
տի կտոր, որը թաթախում էր թանաքի  
մէջ և սկսում էր տողել: Առաջ թանաքն  
այնպէս չէր շինվում, ինչպէս որ հիմայ.  
փոխանակ գխտորի նոքա վերցնում էին  
մուրը, տրարում էին ջրով և սոսինձ էին  
խառնում հետը, որ թանաքը թանձը  
լինի: Բացի ու թանաքից, շինում էին  
և գունաւոր՝ կարմիր, կապուտ, կանաչ,  
դեղին, ոսկեգոյն և արծաթագոյն:

Գրագիրը գրելիս մեզ նման չէր նըս-  
տում սեղանի առաջ, այլ թուղթը դնում  
էր ծնկանը կամ ձախ թեկին և այդ  
կերպ, ծալապատիկ, մէջքը կուցը ածած  
գը-  
րում էր: Գրիչները շատ հազուագիւտ  
էին և առաջ բոլորնի չէին գործածում.  
գրելու համար կային վրձիններ կամ

բարակ, սրածալր փալտի կտորներ: Իսկ  
եթէ թղթի տեղ գրում էին բարակ,  
արճճէ թերթի վերայ, այն ժամանակ  
վրձինների փոխանակ գործ էին ածում  
մի առանձին ոսկը կամ երկաթէ գրիչ-  
որի մէկ ծալրը սուր էր, իսկ միւսը թիա-  
կի նման տափակ, որով կարելի էր թեր-  
թը հարթել: Մի քանի տեղերում առա-  
ջին տողը գրում էին ձախ կողմից դէպի-  
աջ, երկրորդ տողն աջից ձախ, երրորդը  
կրկին ձախից աջ և այլն: Այնպիսի տե-  
ղեր էլ կալին, որ գրում էին վերից վար,  
կամ բոլոր տողերն աջից ձախ: Յետոյ  
արդէն շատ ուշ սկսեցին գրել այնպէս,  
ինչպէս որ մենք հիմայ գրում ենք:

Ի՞ հարկէ աննշան նամակները, տոմ-  
սակները, կամ հաշիւնները գրում էին  
հասարակ կերպով. բայց աւելի լուրջ  
բանները, զորօրինակ Աստուածաշունչը և  
պատմական գրքերը միշտ գրում ունաշ-  
իսում էին շատ մեծ ուշադրութեամբ և  
զգուշութեամբ: Այդ տեսակ գրքերի տո-

զի սկզբի տառերը գունաւոր էին լինում.  
մեծ մասամբ կարմիր գոյնով և նաշխում  
էին այնպէս որ այդ տառերը պատկե-  
րացնում էին զանազան անսառւններ,  
ծառեր, թռչուններ և այլն: Թագաւոր-  
ների համար նշանակուած գրքերը շատ  
անգամ ամբողջովին գրվում էին ծիրա-  
նեգոյն և ոսկեգոյն տառերով: Այդ  
տեսակ նաշխերի համար կալին առան-  
ձին վարպետներ. հասարակ գրադիրներն  
յանձն չէին առնում. նոքա գրքերն ար-  
տագրում էին սկզբնական տառերի հա-  
մար տեղ թռչներով և վերջացնելուց յե-  
տոյ տալիս էին նախարարներին: Թէև  
քիչ բայց գտնվում էին մարդիկ, որ թէ  
արտագրում և թէ նաշխում էին: Հին  
գրքերի լուսանցքներում լինում էին և  
զանազան պատկերներ:

Թրանսիական մատենագարաններից  
մէկում մինչեւ օրս պահպանվում է մէկ  
գեղեցիկ Աւետարան, որը շատ նշանա-  
ւոր է իւր նաշխերով ու զարդարանքնե-

ըով: Աւանդութիւն կայ թէ այն մար-  
դը, որ գրել և նաշխել է այդ Աւե-  
տարանը, իւր ամբողջ կեանքը դո-  
րանով է պարապել:

Այն ժամանակուայ գրած թղթե-  
րում այնպիսի սխալներ էին պատահում,  
որ գժուարացնում և շփոթեցնում էին  
ոչ միայն ծոլ և անհոգ գրագիրներին,  
այլ և այնպիսիներին, որոնք ուզում էին  
աւելի ուղիղ և ճիշդ գրել: Նատ անգամ  
գրուած էին լինում չվերջացրած կամ  
կրծատած խօսքեր և մի և նոյն ժամանակ  
նոյն խօսքը մէկ տեղում այսպէս, միւս տե-  
ղում մի ուրիշ կերպ: Կրծատած խօսքեր հի-  
մայէլ պատահում են գրքերում, բայց աւելի  
քիչ և համարեա բոլորը կրծատում են մի  
և նոյն խօսքերը և բացի այդ շատ անգամ  
գրքի սկզբում կամ վերջում լինում է  
ծանօթութիւն թէ ինչպէս պէտք է  
կարգալ այդ կրծատած խօսքերը: Բայց  
առաջ այդ չէին անում և այդ պատճ-  
ռով շատերը սխալվում էին: Զորօրինակ

պատահել է այս նախադասութիւնը.  
 «Սպանուած են 10 զօ.» մէկ գրագիր ար-  
 տագրել է «10 զօրական» իսկ մէկ ուրի-  
 շը «10 զօրագունդ»: Կէտերն էլ ինչպէս  
 պատահէր դնում էին և երեմն մէկ  
 սխալ գրուած ստորակէտի պատճառով  
 կարդացողը սխալվում էր: Զորօրինակ,  
 փոխանակ «նա, ասաց Սրիստոտէլը, հրէայ  
 էր» գրագիրը գրել է այսպէս: «նա ա-  
 սաց, Սրիստոտէլը հրէայ էր»: Եւ շատե-  
 րը համոզուեցին, որ Սրիստոտէլը հրէայ  
 էր, թէև նա իսկապէս յոյն էր:

Որովհէտեւ այն ժամանակուալ գրա-  
 գիրները շատ վատ էին և առանց ու-  
 շադրութիւն դարձնելու սխալ սխալի ե-  
 տեկից էին գրում, շատերը սկսեցին գան-  
 գատուել և հէնց ալդ ժամանակ քահա-  
 նաները գտան մի առանձին միջոց. նո-  
 քա վճռեցին, որ ս. գրքերը, սաղմոսներն  
 ու լուրջ գրուածքները պէտք է գրեն  
 առանձին մարդիկ, վանքերի մէջ և այն  
 պայմանով, որ նոցա գրածներն ուղեն

Հասկացող մարդիկ: Եւ միայն ալդ տե-  
 սակ ուղղած գրքերը թոյլ էին տալիս  
 ծախելու: Անսխալ արտագրուած գրքերն  
 ուրիշներին տալ կարգալու համար այն  
 ժամանակ նշանակում էր այնպիսի լաւ  
 ու բարի գործ անել, որ գիրքը տուողի  
 շատ պակասութիւնները ներում էին:

Վանքերում գրքերի արտագրելը  
 կատարվում էր մեծ հտնդէսով: Այն սե-  
 նեակում, որտեղ աշխատում էին գրա-  
 գիրները ձայն, ծպտուն չէր լսվում. բո-  
 լորովին թոյլ չէին տալիս խօսելու. մէկը  
 թելադրում էր, իսկ մնացածները գրում  
 էին:

Աւելի ուշ բացի վանքերի գրագիր-  
 ներից դուրս եկան և թագաւորական  
 գրագիրներ, որոնք նոյնպէս չէին կարող  
 իրանց արտագրած գրքերը ծախել, մինչև  
 որ ուղել չտալին:

Սրտագրում էին առանձին առանձին  
 մէկ թերթը միւսի ետեկից, ամէն մէկը  
 մէկ, երկու կամ երեք սիւնակներով,

լետոյ թերթերն իրար ալնպէս էին կըպց-  
նում, որ դուրս էր գտվիս երկար շեղու-  
Այդ շերտի ծալըթերին կպցնում էին հարթ-  
ու կլօրիկ դլանակներ և նոցանից մէկի  
վերայ կպցնում էին ամբողջ ձեռագիրը\*):  
Այե տեսակ ոլորած գըքին շապիկ էին  
հազցնում, որի վերայ գըռում էին գրքի  
և հեղինակի անունը: Շապիկի տակից  
երեցող գլանակի գրսի կողմը զարդա-  
րուած էր լինում փղոսկրով, թանգագին  
քարելով և ոսկով: 'Ի հարկէ, ալդպիսի  
զարդարանքներ ամեն գրքի վերայ չէր  
լինում: Այդ տեսակ ոլորած ծրարները  
կոչվում էին հատորներ, որոնք լինում  
էին թէ շատ հաստ և թէ շատ բարակ:

\*.) Իսկ այդ ձեռվ էին ուղարկում նա-  
մակները. պապիրուսի կլօրած թերթը փա-  
թաթում էին ժապաւենով, որի երկու ծայ-  
րին մեղրամոմ էին կպցնում և ապա ժա-  
պաւենի վերայ հասցէն էին գրում: Իսկ  
մեղրամոմի վերայ կնիք էին նախում:

Մէկ հատորում չէր կարող շատ բան տե-  
ղաւորուել և այդ պատճառով շարադրու-  
թիւնների մեծ մասը բաղկացած էր լի-  
նում շատ հատորներից: Յետոյ արդէն  
սկսեցին մեծ գըքեր կազմել: Գրագիրն  
արտագրելը վերջացնելուց լետոյ թերթը  
թերթին էր կպցնում. փալտից կամ  
պզնձից ամուր կազմ էր շինում, որը  
զարդարում էր և լետոյ կամ կապկպում  
էր բարակ կաշիներով և կամ պատրաստի  
գիրքն առանձին արկղիկի մէջ էր դնում:

Այդ գըքերը միատեսակ չէին լինում:  
Պատմութիւնը գրում էին մեծ թերթե-  
րի վերայ, իսկ հեքեաթներն ու բանա-  
ստեղծութիւնները փոքրիկ: Մեծ գըքերը  
համարվում էին լուրջ. և շատ անգամ  
գիրք ծախողները յանդիմանում էին հե-  
ղինակներին, որ նոցա գըքերը շատ փոքր  
են և չեն ծախվում: Այդ շատ վատ էր  
շարադրողի համար, որովհետեւ փոքրիկ  
գըքերը գնում էին միայն ապլանք փա-  
թաթելու համար:

Առաջ գրքերը շատ խնամքով էին  
պահում. թերթերին քսում էին մի ա-  
ռանձին տեսակ իւղ, ողի կամ ուրիշ մի  
որ և է հեղուկ, որ մկներն ու զանա-  
զան միջատները գրքերը չփչացնեն: Բա-  
ցի այդ վախենում էին և գիրք գողա-  
ցողներից և գրքերը գողերից պաշտպա-  
նելու համար կապում էին նոցա ՀԵՂ-  
Թայով և ամրացնում էին սեղաններին:  
Խոկ մի քանիսն էլ հիմիկուան աշակերտ-  
ների նման գրքերի վերայ գրում էին՝  
«Ով որ այս գիրքը գողանալ, թող նա  
այս կամ այն փորձանքին հանդիպի»:

Քանի որ գրագիրներ քիչ կային, գրքեր էլ քիչ էին: Այն ժամանակ ամեն գրագիր իրաւունք ունէր իւր աշխատու-  
թիւնը ծախելու, եթէ առանց պատուէր ստանալու էր արտագրում: Բայց լետոյ գրքերն աւելի շատացան և նոցա հա-  
մար առանձին գրավաճառանոցներ բա-  
ցուեցին, որտեղ բացի գրքերից կարելի էր առնել և ամեն բան, ինչ որ պէտք

էր գրելու համար՝ թուղթ, թանաք և  
ալին: Այդ տեսակ գրավաճառանոցների  
գուների վերայ շատ յայտարարութիւններ  
էին գրում, իսկ ներսը պահարաններում  
գարսուած էին մինում շատ գրքեր և  
ծրաբներ: Գրավաճառանոցներում կարելի  
էր հանգիպել շատ հեղինակների և գիտ-  
նականների, որսնք մտնում էին այդտեղ  
իրանց ընկերներին տեսնելու, վիճելու,  
խօսելու նոր գուրս եկած գրքի մասին  
և կամ նորութիւններ լսելու:

Պէտք է ասած, որ գրքերը թանգ  
էին, այդ պատճառով էլ առնող քիչ կար:  
Հասարակութեան մեծ մասը գիրքը տուն  
էր տանում կարդալու կամ արտագրե-  
լու համար: Գրավաճառանոցի տէլն ի-  
րաւունք չունէր ոչ ոքի մերժելու. դո-  
քա իսկապէս ոչ թէ գրավաճառանոցներ,  
այլ գրասուններ էին:

Յետոյ հարուստ մարդիկ սկսեցին  
գրասուն սարքել իրանց տներում. նո-  
ցանից շատերը գիրք բոլորովին շէին կար-

գում, բայց զբատուն կազմում էին հետևելով ուրիշներին: Նոքա ուղղակի պարծենալու համար էին անում, որ ասեն թէ շատ փող ենք ծախսում գրքերի համար: Նոցա համար մի և նոյն էր, ինչ գիրք էլ որ լինէր. գնում էին տմեն տեսակ գիրք ինչ որ ձեռքերն ընկնէր, շըքեղ կազմել էին տալիս և գնում էին պահարաններում: Այն սենեակը, որտեղ որ գրքի պահարաններն էին, գարդարում էին շատ սիրուն ու շքեղ:

Ի հարկէ, գիրք հաւաքողները բոլորն էլ արդպէս չէին. կային և հասկացող մարդիկ, որ գիտէին թէ ո՞ր գիրքն է լաւ և ո՞ր փատ: Նոքա փող չէին խնայում. առնում էին պէտքական գրքեր և կազմում էին լաւ գրատուններ: Նոքա ոչ թէ սենեակները գեղեցկացնելու կամ ընկերների մօտ պարծենալու համար էին այդ անում, այլ ուրիշ մարդկանց էլ օգուտ տալու համար: Ով որ ուղենարքան սովորել, կարող էր գալ այդպիսի-

ների մօտ և կարդալու համար գիրք վերցնել:



Ս.վանս որ մարդիկ այն ժամանակ իրար հետ հաշտ չէին ապրում. շատ անգամ թշնամին գալիս և ալրում էր ամբողջ քաղաքներ. այդպէսով փչանում էին հարուստ մատենադարաններ: Պատահում էր, որ մի և նոյն տէրութեան մարդիկ էլ իրար թշնամի էին լինում: Զանազան հաւատի տէր մարդիկ միմեանց թշնամի էին համարում և կարծելով թէ այդ թշնամութեան պատճառը գրքերն են, նոքա ալրում, փչանում էին, որ ոչ ոք չկարգալ: Այդ պատճառով էլ կին ժամանակուայ գրքեր քիչ կան և մեծ մասսամբ գտնվում են թանգարաններում: Էլի մէկ ուրիշ պատճառ կայ, որ կին գրքեր քիչ են մնացել կար ժամանակ, որ մագաղաթ շատ գժուար էր գտնվում և գրագիրները նոր գիրք արտադրելու համար լուանում էին հին գրքերի վերայ գրուածները և նորից գրում էին



լուացած մագաղաթի վերայի Բալց լաւ  
որ շատերը չէին կարող բոլորովին ջըն-  
ջել և այն մարդիկ, որոնք ուզում էին  
իմասնալ, թէ արդեօք ինչ էր զրուած  
հին գրքերում, երկու անգամ գրուած  
գրքերը կարողանում էին ջոկել ու կար-  
դալ:

Նատ ուշ արդէն գտան թուղթը,  
որ մենք հիմայ գործ ենք դնում և ան-  
միջապէս թղթից լետոյ էլ գտան տը-  
պագըլու միջոցը:



2013

11319

ՀՀ Ազգային գրադարան



NL0084353

Նոյն թարգմանչինն է

1.	Յովհան Գուտտեհնբէրդ	.	.	.	—	15
2.	Դօքտօր Զէններ	.	.	.	—	20
3.	Մանկական թատրոն	.	.	.	1	—
4.	Իբսէնի, Նօրա	.	.	.	—	30
5.	Լիր Արբայ	.	.	.	—	5
6.	Գայլ	.	.	.	—	3



ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.